



Ի. ՍՏԱԼԻՆ

ՊԱՏԱՍԻԱՆ
ԸՆԿԵՐ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

ՊԵՏԶՐԱՏ
ԲԱՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1930

17 APR 2018

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

91

Ի. ՄՏԱԼԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆ
ԸՆԿԵՐ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

ՊԵՏԶՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

1/9

И. СТАЛИН
ОТВЕТ ТОВАРИЩАМ КОЛХОЗНИКАМ
Армгиз—Издательство полят. литературы
Ереван, 1939



11-363199r

Լրագրերից հայանի յե, վոր Մտայինի «Գլխապաշտույտ՝ հաջողութիւններից» հոդվածը և ԿԿ-ի հայանի վորոշումը «Կուսակիծը կոլտնտեսային շարժման մեջ ծոկուդում պայքարելու մասին» բաղմաթիվ արձագանգներ են առաջ բերել կոլտնտեսային շարժման պրակտիկների շարքերում: Այդ կապակցութեամբ յես վերջին ժամանակներս ընկեր կորորտնտեսականներից ստացել եմ մի շարք նամակներ, վորոնց մեջ պահանջ և արվում պատասխանել այդտեղ դրված հարցերին: Իմ պարտականութեանն եր պատասխանել նամակներին մասնավոր նամակագրութեան կարգով: Բայց այդ անհնարին դուրս յեկավ, վորովհետև նամակների կեսից ավելին ստացվել եր առանց նրանց հեղինակների հասցեյի մատնանշման (մոռացել եյին հասցեներն ուղարկել): Մինչդեռ նամակներում շոշափված հարցերը քաղաքական հակայական հետաքրքրութեան են ներկայացնում մեր բոլոր ընկերների համար: Բացի դրանից, հասկանալի յե, վոր յես չեյի կարող առանց պատասխանի թողնել նաև այն ընկերներին, վորոնք մոռացել եյին իրենց հասցեներն ուղարկել: Ուստի յես կանգնած եյի մի անհրաժեշտութեան առաջ՝ պատասխանել ընկեր կոլտնտեսականների նամակներին բացահայտ կերպով, այսինքն՝ մամուլի միջոցով, նրանց միջից վերցնելով դործի համար հարկավոր բոլոր հարցերը: Յես ավելի ևս սիրով դիմեցի այդ դործին այն պատճառով, վոր այդ առթիվ ունեյի ԿԿ-ի ուղղակի վորոշումը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑ: Վո՞րն ե դյուրացիական հարցում յեզամ սխալների արմատը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Միտալ մոտեցումը դեպի միջակը: Միջակի հետ ունեցած տնտեսական հարաբերութեանների բնազավառում բռնութեան թույլ տալը: Այն բանի մոռացումը, թե տնտեսական դողումը միջակային մասսաների հետ պետք ե կառուցվի վո՞չ թե բռնի միջոցառումների հիմքի վրա, այլ

միջակի հետ համաձայնություն ունենալու հիմքի վրա, միջակի հետ դաշինք ունենալու հիմքի վրա: Այն բանի մոտացումը, վոր տվյալ մոմենտում կոլտնտեսային շարժման հիմք հանդիսանում է բանվոր դասակարգի ու չքավորութեան դաշինքը միջակի հետ՝ կապիտալիզմի դեմ ընդհանրացնելու, կուլակութեան դեմ առանձնապես:

Բանի դեռ հարձակումը կուլակութեան դեմ կատարվում էր միջակի հետ միասնական ճակատով, ամեն ինչ լավ էր ընթանում: Իսկ յերբ մեր միջանի ընկերներ, հաջողություններից արբեցած, սկսեցին կուլակի վրա հարձակվելու ուղուց աննկատելիորեն սահել դեպի միջակի դեմ պայքարելու ուղին, յերբ նրանք, կոլեկտիվացման բարձր տոկոսի հետևից ընկած՝ սկսեցին միջակի նկատմամբ բռնություն գործ դնել, նրան ընտրական իրավունքից զրկելով, «կուլակաթափ անելով» ու երսպրոպրիացիայի լենթարկելով նրան, — հարձակումն սկսեց ծովել, միջակի հետ ունեցած միասնական ճակատն սկսեց խարխիլել և, պարզ բան է, կուլակը հնարավորություն ստացավ նորից վտաքի կանդնելու փորձեր անելու:

Մոտացել են, վոր բռնությունը, վորն անհրաժեշտ է ու ուղտակար մեր դասակարգային թշնամիների դեմ պայքարելու գործում, անթույլատրելի ու կորստարեր է մեր դաշնակիցը հանդիսացող միջակի նկատմամբ:

Մոտացել են, վոր հեծելազորային հարձակումները, վորոնք անհրաժեշտ են ու ուղտակար ռազմական բնութի խրնդիրներ լուծելու համար, անպետք ու կորստարեր են կոլտնտեսային շինարարութեան խնդիրները լուծելիս, վորն ընդամենը կազմակերպվում է միջակի հետ դաշնակցած:

Այս է գյուղացիական հարցում յեղած սխալների արմատը:

Ահա թե ինչ է ասում Լենինը միջակի հետ ունեցած անտեսական հարաբերությունների մասին.

«Ամենից ավելի մեք պետք է հիմնվենք այն ճշմարտության վրա, վոր այստեղ բռնության մեթոդներով ըստ բանի բուն էություն վառնչի չի կարելի հասնել: Այստեղ անտեսական խնդիրը բոլորովին այլ կերպ է զբվում: Այստեղ չկա այն վերնախավը, վոր կարելի չի կարել, թողնելով ամբողջ հիմքը, ամբողջ շենքը: Այն վերնախավը, վորպեսին բազա-

լում կապիտալիստներն էլին, այստեղ չկա: Այստեղ բռնության գործել՝ նշանակում է կործանել ամբողջ գործը... Չկա ավելի հիմար բան, քան միջակ գյուղացու տնտեսական կարաքիտությունների բնագավառում բռնություն կիրառելու միտքն իսկ» (Տ. XXIV, էջ 168):

Այնուհետև.

«Միջակ գյուղացիության նկատմամբ բռնություն գործադրելը անձագույն վնաս է: Դա մի բաղձաթիվ, բաղձաթիվն իսկ է: Մինչև անգամ Յեփրոզայում, վորտեղ նա վոչ մի տեղ այդպիսի ուժի չի հասնում, վորտեղ վիթխարիորեն դարդացած է տեխնիկան ու հուլատրան, բաղաբաշին կյանքը, յերկաթուղիները, վորտեղ ամենից ավելի հեշտ կլինեք դրա մասին մտածել, — վո՛չ վոք, ամենահեղափոխական սոցիալիստներից վո՛չ մեկը, յերբեք բոնի միջոցառումներ չի առաջարկել միջակ գյուղացիության նկատմամբ» (Տ. XXIV, էջ 167):

Թ՛վում է, թե պարզ է:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՍՐՅ: Վորո՞նք են կոլտնտեսային շարժման մեջ յեղած գլխավոր սխալները:

ՊԱՏԱՍԽԱՆ: Դրանք, այդ սխալները, ասնվալն յերեքն են:

1) Խախտել են կամավորութեան լենինյան սկզբունքը կոլտնտեսությունները կառուցելիս: Խախտել են կուսակցութեան հիմնական ցուցումները և գյուղատնտեսական արտադրող ուրիշակելի կանոնադրությունը կոլտնտեսային շինարարութեան կամավորութեան մասին:

Լենինիզմն ուսուցանում է, վոր գյուղացիներին հարկավոր է կոլեկտիվ տնտեսութեան սկզբնի վրա փոխադրել կամավորութեան կարգով, մենատնտեսութեան հանդեպ հասարակական, կոլեկտիվ տնտեսութեան ունեցած առավելությունների մեջ համոզելու ճանապարհով: Լենինիզմն ուսուցանում է, վոր կոլեկտիվ տնտեսութեան առավելությունների մեջ գյուղացիներին կարելի չի համոզել միայն այն դեպքում, յեթե ցույց արվի նրանց ու ապացուցվի գործով, փորձով, վոր կոլտնտեսությունը մենատնտեսությունից լավ է, վոր նա մենատնտեսությունից շահավետ է, վոր կոլտնտեսությունը յեղք է տալիս գյուղացուն, չքավորին ու միջակին՝ կարիքից ու աղքատությունից: Լենինիզմն ուսուցանում է, վոր այս պայմաններից դուրս՝ կոլտնտեսությունները չեն կարող հաստատուն լինել: Լենին-

նիդմն ուսուցանում ե, վոր կոլտնտեսային անտեսութիւնը մարդկանց վրին ուժով վաթաթելու ամեն մի սործ, հարկադրման կարողով կոլտնտեսութիւններ արմատավորելու ամեն մի սործ կարող ե տալ միայն բացասական հետեւանքներ, կարող ե դուրացիներին միայն հետ վանել կոլտնտեսային շարժումից:

Յեւ իսկապես, քանի դեռ այս հիմնական կանոնը պահպանվում էր, կոլտնտեսային շարժումը հաջողութիւն եր սեննում հաջողութեան հետեւից: Բայց մեր միջանկ ընկերները, հաջողութիւններից արեցած, սկսեցին արհամարհել այս կանոնը, սկսեցին ցուցաբերել ծայրահեղ շտապողականութիւն ե, կոլեկտիվացման բարձր առկոսների հետեւից ընկած՝ սկսեցին հարկադրական կարողով կոլտնտեսութիւններ արմատավորել: Զարմանալի չե, վոր այդպիսի «քաղաքականութեան» բացասական հետեւանքները յերկար ստանել չտալին իրենց: Հապճեպորեն ծաղած կոլտնտեսութիւններն սկսեցին նույնպէս արագ հարվել, ինչպէս վոր արագ ծաղել եյին, իսկ դուրացիութեան այն մասը, վոր դեռ յերեկ ահադին վտանգութեամբ եր վերաբերում կոլտնտեսութիւններին, սկսեց յերես դարձնել նրանցից:

Այս ե առաջին ու դրսայնոր սխալը կոլտնտեսային շարժման մեջ:

Ահա թե ինչ ե ասում Լենինը կոլտնտեսային շինարարութեան կամավորութեան մասին.

«Այժմ մեր ինդիւրն ե՝ անցնել հողի համրային մշակմանը, անցնել ընդհանուր խոշոր անտեսութեանը: Բայց Խորհրդային իշխանութեան կողմից վոչ մի հարկադրանք չի կարող լինել. վոչ մի որենք չի հարկադրում այդ անկուր: Գյուղատնտեսական կոմունամ կամավոր կիրպով ե հիմնում, հողի համրային մշակման անցնելը կարող ե լինել միայն կամավոր, այս անտակետից բանվորա-դուրացիական կառավարութեան կողմից ամենափոքր հարկադրանք իսկ չի կարող լինել ու որենքով չի թույլատրվում: Յեթն ձեզանից մեկնումէին այդպիսի հարկադրանքներ նկատի, ապա դուք պետք ե իմանաք, վոր դա շարահուժ ե, վոր դա որենքի խախտում ե, վորը մենք բոլոր ուժով ջանում ենք ուղղել ե կուղղենք»¹ (Տ. XXIV, էջ 43):

¹ Ընդգծումն իմն ե: Ի. Սու.:

Ս. Երուհետե.

«Միայն այն դեպքում, յի՞ն հաջողվի դուրացիներին դործով ցույց տալ հողի հանրային, կոլեկտիվ, ընկերային, արտելային մշակման առավելութեանները, յեթե միայն հաջողվի ողնել դուրացուին ընկերային, արտելային անտեսութեան միջոցով, միայն այն ժամանակ պետական իշխանութեանն իր ձեռքում պահող բանվոր դասակարգն իրոք կապացուցի դուրացուին իր իրավացիութեանը, իրոք հաստատուն կերպով ու իսկապէս իր կողմը կդրավի բողմամբիւն դուրացիական մասան: Այս պատճառով ընկերային, արտելային հողադործութեանն աջակցութեան ցույց տալով ամեն տեսակի ձեռնարկումների նշանակութեանը չի կարելի չափազանցանել: Մենք ունենք դուրեղի խուլ վայրերում ցըրված, ցիրուցան միլիոնավոր տանձին անտեսութիւններ... Միայն յերբ զործակախարեն, փորձով, վոր մոտ ե դուրացիներին, աղացուցվի, թե անցումը դեպի ընկերային, արտելային հողադործութեանն անհրաժեշտ ե ու հնարալոր, միայն այն ժամանակ մենք իրավունք կունենանք ասելու, վոր այնպիսի հսկայական դուրացիական յերկրում, ինչպիսին Ռուսաստանն ե, սոցիալիստական հողադործութեան ուղիով լուրջ քայլ ե արված»¹ (Տ. XXIV, էջ 579—580):

Վերջապէս, դարձյալ մի տեղ Լենինի աշխատութիւններից.

«Ներխուսելով միջակ դուրացիների ամեն տեսակի ընկերութեանները, ինչպէս նաև դուրացատնտեսական կոմունաները, Խորհրդային իշխանութեան ներկայացուցիչները վոչ մի ամենափոքր հարկադրանք չպետք ե թուլ տան այդպիսիներն ստեղծելու: Միայն այն միավորումներն են արժեքավոր, վորոնք հենց իրենք դուրացիներն են իրադրծել իրենց աղատ նախաձեռնութեամբ ե վորոնց որուանքն ստուղել են նրանք պրակտիկայում: Գայրահեղ շտապողակամութեամբ այս գործում վնասակար ե, վորովհետև ընդունակ ե լոկ ուժեղացնելու միջակ դուրացիութեան նախապաշարմունքները նորմուծութիւնների հանդեպ: Խորհրդային իշխանութեան այն ներկայացուցիչները, վորոնք իրենց թուլ են տալիս դործադրելու վճի միայն ուղղակի, այլև թեկուզ հենց անուղղակի հարկադրանք դուրացիներին կոմունաներին միացնելու նպատակով, պետք ե յենթարկվեն խտազույն պատասխանավորութեան ու հետացվեն դուրեղ աշխատանքից»¹ (Տ. XXIV, էջ 174):

Թիւում ե, թե պարզ ե:

Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր կուսակցութեանը Լենինի այս ցուցումները կկիրառի ամենայն խրատութեամբ:

¹ Ընդգծումն իմն ե: Ի. Սու.:

2) Խախտել են ԽՍՀՄ-ի տարբեր շրջանների պայմաններին բազմազանություն հաշվառման լենինյան սկզբունքը կոլտնտեսային շինարարություն վերաբերմամբ: Մոռացել են, վոր ԽՍՀՄ-ում կան ամենաբազմապիսի մարզեր, վորոնք ունեն տարբեր տնտեսական կացութեան ու կուլտուրայի մակարդակ: Մոռացել են, վոր այդ մարզերի մեջ կան առաջավոր, միջակ ու հետամնաց մարզեր: Մոռացել են, վոր կոլտնտեսային շարժման տեմպերն ու կոլտնտեսային շինարարության մեթոդները չեն կարող միանման լինել այդ մարզերի համար, վորոնք բնավ միանման չեն:

«Սխալ կլինե՞ր, — սուտ է Լենինը, — յեթե մենք պարզապես շարունակ դեկրետներ արտադրեյինք Ռուսաստանի բոլոր վայրերի համար, յեթե բաշխեի՞նք կոմունիստները, խորհրդային աշխատողները Ուկրաինայում և Դոնի ափերին սկսեյին առանց խորություն, հարուստ կերպով (орылом) դրանք տարածել այլ մարզերի վրա»... վորովհետև «մենք վոչ մի դեպքում մեզ չենք կաշկանդում միտրինակ շարունակ, մեկ անգամ ընդմիջում չենք վճռում, վոր մեր փորձը, Կենտրոնական Ռուսաստանի փորձը, կարելի չե ամբողջությամբ փոխադրել բոլոր ծայրամասերը» (Հ. XXIV, էջ 125—126):

Լենինն ասում է այնուհետև, վոր

«Կենտրոնական Ռուսաստանը, Ուկրաինան, Սիբիրը շարունակելը, վորոչ շարունի յենթարկելը մեծազույն հիմարություն կլինի» (Հ. XXVI, էջ 243):

Վերջապես, Լենինը պարտավորեցնում է Կովկասի կոմունիստներին, վորպեսզի նրանք

«հասկանան» իրենց դրուքյան, իրենց հանրապետությունների դրուքյան յուրորինակուքյունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ դրուքյունից ու պայմաններից, հասկանան անհրաժեշտությունն այն բանի, վոր վոչ թե պետք է պատմեն մեր տակտիկան, այլ մտածված կերպով ձևափոխել այն՝ կոմկրեստ պայմանների տարբերության համապատասխան» (Հ. XXVI, էջ 191):

Թվում է, թե պարզ է:

Լենինի այս ցուցումների հիման վրա՝ մեր կուսակցության Կենտկոմը «Կոլեկտիվացման տեմպի մասին» (տես 1930 թ. հունվարի 6-ի «Правда»-ն) իր վորոշման մեջ ԽՍՀՄ-ի մարզերը, կոլեկտիվացման տեմպերի տեսակետից,

բաժանեց յերեք խմբի, վորոնցից Հյուսիսային Կովկասը, Միջին Վոլգան ու Ստորին Վոլգան կարող են կոլեկտիվացումը հիմնականում ավարտել 1931 թ. դարնանը, մյուս հատիկային մարզերը (Ուկրաինա, Կենտրոնական Սևահող մարզ, Սիբիր, Ուրալ, Կաղակաստան և այլն) կարող են այն հիմնականում ավարտել 1932 թ. դարնանը, իսկ մնացած մարզերը կարող են կոլեկտիվացումը յերկարաձգել մինչև հնգամյակի վերջը, այսինքն՝ մինչև 1933 թիվը:

Թվում է, թե հասկանալի չէ:

Իսկ ի՞նչ ստացվեց իրականում: Բանից դուրս յեկավ, վոր մեր ընկերներից վոմանք, կոլտնտեսային շարժման առաջին հանդուգություններից արեցած, փառավորապես մոռացան թե՛ Լենինի ցուցումները, թե՛ Կենտկոմի վորոշումը: Մոսկվայի մարզը, տենդորեն ընկած կոլեկտիվացման փրոնթի թիվերի հետևից, սկսեց իր աշխատողներին կողմնորոշել դեպի կոլեկտիվացման ավարտումը 1930 թ. դարնանը, թեև նա իր տրամադրություն տակ ուներ վոչ պակաս քան յերեք տարի (1932 թ. վերջը): Կենտրոնական Սևահող մարզը, չցանկանալով «մյուսներից հետ մնալ», սկսեց իր աշխատողներին կողմնորոշել դեպի կոլեկտիվացման ավարտումը 1930 թվի առաջին կեսին, թեև նա իր տրամադրություն տակ ուներ վոչ պակաս քան յերկու տարի (1931 թ. վերջը): Իսկ անդրկովկասցիներն ու թուրքեստանցիները, առաջավոր շրջաններին «հասնելու և անցնելու» իրենց բուռն ձրդտուով տարված, սկսեցին կողմնորոշվել դեպի կոլեկտիվացման ավարտումն «ամենակարճ ժամանակամիջոցում», թեև նրանք իրենց տրամադրություն տակ ունեյին ամբողջ չորս տարի (1933 թ. վերջը): Հասկանալի չէ, վոր կոլեկտիվացման այդպիսի հապճեպ «տեմպ» կիրառելիս կոլտնտեսային շարժման համար նվազ պատրաստված շրջանները, յեռանդադին ձգտելով «անցնել» ավելի պատրաստված շրջաններից, հարկադրված յեղան ուժեղացրած վարչական ճնշում դորձ դնելու, վորձելով կոլտնտեսային շարժման արագ տեմպի համար պակասող գործոնների թերին լրացնել իրենց սեփական վարչական բուռն յեռանդով: Արդյունքները հայտնի չեն: Բոլորին հայտնի չէ այն խառնաշփոթությունը

ներ, վոր ստացվեց այդ մարդերում և վորը հետո հարկ յեղալ վերացնելու հենակումի միջամտության կարգով:

Այս է յերկրորդ սխալը կոլտնտեսային շարժման մեջ:

3) Սխախտել են լենինյան սկզբունքը, ըստ վորի կոլտնտեսային շինարարության նկատմամբ անթույլատրելի յեթուիչք պործել շարժման չափարտված ձևի վրայով: Սխախտել են լենինյան սկզբունքը—մասսաների զարգացումից առաջ չանցնել, մասսաների շարժումը չդեկրետադրել, մասսաներից չհատրվել, այլ շարժվել մասսաների հետ միասին և նրանց առաջ շարժել, նրանց մոտեցնելով մեր լոզունգներին և հեշտացնելով նրանց համար՝ իրենց սեփական փորձով համողվելու մեր լոզունգների ճշտության մեջ:

«Յերբ Պետրոգրադի պրոլետարիատն ու Պետրոգրադի կայսզորի դերվորները վերցնում էին իշխանութունը,—ասում է Լենինը,—նրանք հիանալի կերպով գիտեցին, վոր դյուրում շինարարութուն կատարելու գործում մեծ դժվարութուններ են հանդիպելու, վոր այստեղ հարկավոր է ավելի աստիճանաբար առաջ դնալ, վոր այստեղ դեկրետներով, որենքներով հողի հանրային մշակում փորձելը մեծագույն անհրեքութուն կլիներ, վոր այս բանին կարող են համաձայնել չնչին թիվ կադմոզ գիտակիցները, իսկ դյուրացիների հակառակ մեծամասնութունն այս խնդիրը չէր դնում: Յեզ այս պատճառով մենք սահմանափակում էինք նրանով, ինչ բացարձակապես անհրաժեշտ է հեղափոխության զարգացման շահերի տեսակետից: Վոչ մի դեպքում մասսաների զարգացումից առաջ չանցնել, այլ սպասել, մինչև վոր այդ մասսաների սեփական փորձից, նրանց սեփական պայքարից աճի առաջընթաց շարժումը» (հ. XXIII, էջ 252):

Յերևելով Լենինի այս ցուցումներից՝ հենակումը «կոլեկտիվացման տեմպի մասին» (տե՛ս 1930 թվի հունվարի 6-ի «Правда»-ն) իր հայտնի վորոշման մեջ ընդունեց, վոր ա) ավյալ մոմենտին կոլտնտեսային շարժման գլխավոր ձև հանդիսանում է դյուրատնտեսական արտելը, վոր բ) այս պատճառով անհրաժեշտ է մշակել դյուրատնտեսական արտելի՝ վորպես կոլտնտեսային շարժման գլխավոր ձևի՝ արինակելի կանոնադրութունը, վոր գ) մեր պործնական աշխատանքում չի կարելի թույլատրել կոլտնտեսային շարժման «դեկրետադրումը» վերելից ու «կոլեկտիվացում խաղալը»:

¹ Ընդգծումն իմն է: Ստ.:

Այս նշանակում է, վոր այժմ մենք պետք է կուրս վերցնենք վո՛չ թե դեպի կոմունան, այլ դեպի դյուրատնտեսական արտելը, վորպես կոլտնտեսային շինարարության գլխավոր ձևը, վոր չի կարելի թույլատրել դյուրատնտեսական արտելի վրայով դեպի կոմունա ցատկելը, վոր չի կարելի դյուրացիների մասսայական շարժումը դեպի կոլտնտեսութունները նենդափոխել կոլտնտեսութունների «դեկրետադրումով», «կոլտնտեսութուն խաղալով»:

Թվում է, թե պարզ է:

Իսկ ի՞նչ ստացվեց իրականում: Բանից դուրս յեկավ, վոր մեր միջանի ընկերներ, կոլտնտեսային շարժման առաջին հաջողութուններից արբեցած, փառավորապես մոռացան թե՛ Լենինի ցուցումները, թե՛ հենակումի վորոշումը: Փոխանակ դյուրատնտեսական արտելի համար մասսայական շարժում կազմակերպելու՝ այդ ընկերներն սկսեցին մենատնտես դյուրացիներին ուղղակի «փոխադրել» կոմունայի կանոնադրությանը: Ծարժման արտելային ձևն ամբողջելու փոխարեն՝ սկսեցին հարկադրական կարգով «հանրայնացնել» մանր անասունները, թռչունները, վոչ-ապրանքային կաթնատու անասունները, բնակելի շենքերը: Լենինիստի համար անթույլատրելի այս շտապողականության հետևանքներն այժմ հայտնի յեն բոլորին: Կայուն կոմունաներ, իբրև կանոն, իհարկե, չստեղծեցին: Բայց դրա փոխարեն ձեռքից բաց թողին մի շարք դյուրատնտեսական արտելներ: Ծիշտ է, մնացին «լավ» բանաձևեր: Սակայն ի՞նչ ողուտ դրանցից:

Այս է յերրորդ սխալը կոլտնտեսային շարժման մեջ:

ՅԵՐՐՈՐԳ ՀԱՐՑ: Ի՞նչպես կարող էին ծաղել այդ սխալները և կուսակցութունն ի՞նչպես պետք է ուղղի դրանք:

ՊԱՏԱՍԽԱՆ: Նրանք ծաղեցին կոլտնտեսային շարժման բնագավառում մեր ունեցած արագ հաջողութունների հիման վրա: Հաջողութունները յերբմն գլուխ են պատեցնում: Նրանք հաճախ ծնում են ծայրահեղ ինքնահավանութուն ու մեծամտութուն: Այդ առանձնապես հեշտ կարող է պատահել իշխանության գլուխ կանգնած կուսակցության ներկայացուցիչներին: Մանավանդ այնպիսի կուսակցու-

թյան, ինչպիսին մեր կուսակցութեանն է, վորի ուժն ու հեղինակութեանը համարյա անչափելի յեն: Այստեղ միանգամայն հնարավոր են կոմունստարժության փաստերը, վորի դեմ կատաղի պայքար եր մղում էին: Այստեղ միանգամայն հնարավոր է հավատը դեպի դեկրետի, բանաձևի, կարգադրութեան ամենակարողութեանը: Այստեղ միանգամայն ունայն է այն վտանգը, վոր կուսակցութեան հեղափոխական միջոցառումները մեր անձայրածիր յերկրի բայ կամ այն անկյուններում վերածվեն կուսակցութեան առանձին ներկայացուցիչների գատարկ, շինովնիկական դեկրետագրման: Յեռ նկատի ունեմ վո՛չ միայն տեղական աշխատողներին, այլև մարդային առանձին դործիչներին, այլև կենտկոմի առանձին անդամներին: «Կոմունիստական սնապարժութեանը, — ասում է Լենինը — նշանակում է այն, վոր մարդ, դոմպիլով կոմունիստական կուսակցութեան մեջ և այնտեղից գեոուս դոմլած չլինելով, յերեակայում է, թե իր բոլոր խնդիրները նա կարող է վճուել կոմունիստական դեկրետագրումով» (Տ. XXVII, էջ 50—51):

Ահա թե ինչ հոգի վրա ծաղեցին սխալները կոլտոնեային շարժման մեջ, կուսակցական գծի ծուռմեները կոլտոնեային շինարարութեան դործում:

Վո՞րն է այդ սխալներն ու ծուռմեների վտանգը, յեթե նրանք այսուհետե ել շարունակվեն, յեթե նրանք չվերացվեն արագորեն ու առանց մնացորդի:

Վտանգն այստեղ այն է, վոր դրանք, այդ սխալները, մեզ ուղիղ հաղորդակցութեամբ տանում են դեպի կոլտոնեային շարժման պոսակաղերժում, դեպի դժտութեան միջակի հետ, դեպի չքաղսրութեան կաղձայութեան, դեպի մեր շարքերի իրարանցում, դեպի մեր ամբողջ սոցիալիստական շինարարութեան թուլացում, դեպի կուլակութեան վերականգնում: Կարճ ասած՝ այդ սխալները տենդենց ունեն դուրս գցելու մեզ դոլուպիութեան հիմնական մասսաների հետ դաշինքն ամբայնելու ճանապարհից, պոլիտարական դիկտատուրայի ամբայնման ճանապարհից դեպի այդ մասսաներից խզվելու ճանապարհը, պոլիտարական դիկտատուրայի խարխուման ճանապարհը:

Այդ վտանգն ուրվազգծից արդեն փեարվարի յերկրորդ

կեռին, հենց այն մոմենտին, յերբ մեր ընկերներն մի մասոր, նախորդ հաջողութեաններով կուրացած, քառատրոփ սլանում եր լենինյան ճանապարհից դուրս: Կուսակցութեան կենտկոմը հաշվի առավ ոյդ վտանգը և չհապաղեց դործին միջամտել՝ հանձնարարելով Ստալինին, վոր կոլտոնեային շարժման վերաբերյալ մի հատուկ հոգովածով նախադուշացում անի չափ ու սահմանը կորցրած ընկերներին: Վոմանք կարծում են, թե «Գլխադատույա՝ հաջողութեանները» հոգվածն Ստալինի անձնական նախաձեռնութեան արդյունք է: Այդ, իհարկե, դատարկ բան է: Կենտկոմը մեզանում գոյութեան ունի վոչ նրա համար, վոր մի այդպիսի դործում վորեւ մեկի նախաձեռնութեանը թուլյատրի: Դա կենտկոմի խոր հետախուզութեանն եր: Յեւ յերբ սլալիցիին սխալների խորութեանն ու չափերը, կենտկոմը չհապաղեց իր հեղինակութեան ամբողջ ուժով հարվածելու սխալները, հրապարակելով 1930 թվի մարտի 15-ի իր նշանավոր վորտչումը:

Գծվար է կատաղի վաղըի ժամանակ կանդնեցնել ու դեպի ուղիղ ճանապարհ դարձնել մարդկանց, վորոնք դլխապատույտ արադութեամբ դեպի անդունդն են սլանում: Բայց մեր կենտկոմը հենց նրա համար ել կոչվում է լենինյան կուսակցութեան կենտրոնական կոմիտե, վոր նա միայն այդպիսի դժվարութեաններ չէ, վոր կարողանում է հաղթահարել: Յեւ նա հիմնականում արդեն հաղթահարել է այդ դժվարութեանները:

Կուսակցութեան ամբողջ ջոկատների համար այդպիսի դեպքերում դժվար է կանդնեցնել իրենց վաղըը, ժամանակին դառնալ դեպի ուղիղ ճանապարհ ու ընթացքի սահին վերակառուցել իրենց շարքերը: Բայց մեր կուսակցութեանը հենց նրա համար ել կոչվում է Լենինի կուսակցութեան, վոր նա բավականաչափ ճկունութեան ունի այդպիսի դժվարութեանները հաղթահարելու համար: Յեւ նա հիմնականում արդեն հաղթահարել է այդ դժվարութեանները:

Այստեղ դլխավոր դործն այն է, վորպետի մարդ իր սխալներն ընդունելու արիութեան դրսևորի և ամենակարճ ժամանակամիջոցում դրանք լիկվիդացիայի յենթարկելու ուժեր դոնի իր մեջ: Մոտ անցյալի հաջողութեաններով ար-

ըննարուց հետո իր սխալներն ընդունելու վախը, ինքնա-
քննադատութեան վախը, սխալներն արագ ու վճռարար ուղ-
ղել չցանկանալը, — այս է դիտարկող զգացումները: Բալա-
կան է, վոր հաղթահարենք այս զգացումները, բալական
է, վոր դեն գցենք թվական փրօնն առաջադրանքներն ու
գրասենյակային-բյուրոկրատական մաքսիմալիզմը, բալա-
կան է, վոր մեր ուշադրութեանը փոխադրենք դեպի կոլաբն-
տեսութեանները կազմակերպական-տնտեսական շինարարու-
թյունը, վորպեսզի սխալները հետքն անդամ չմնա: Վոչ
մի հիմք չկա կասկածելու, վոր կուսակցութեանն արդեն
հիմնականում հաղթահարել է այդ վտանգավոր զգացում-
թյունը:

«Յուր հեղափոխական կուսակցութեանը, — ասում է Լենինը, —
վորոնք մինչև այժմ կործանվել են, — կործանվել են նրանից, վոր մե-
ծամտել ու չեն կարողացել տեսնել, թե ինչի մեջ է իրենց ուժը, և վա-
խեցել են խոսել իրենց քուլուքյունների մասին: Իսկ մենք չենք կոր-
ծանվել, վորովհետև չենք վախենում մեր թուլութեանների մասին խո-
սելուց և կտվորենք հաղթահարել թուլութեանը»¹ (հ. XXVII,
էջ 260—261):

Լենինի այս խոսքերը չի կարելի մոռանալ:

ՉՈՐՐՈՐԳ ՀԱՐՑ: Կուսակցի ծոռամտերի դեմ մղվող պայ-
քարը դեպի հետ կատարվող ընթացք, նահանջ չի՞ արդյոք:

ՊԱՏԱՍԽԱՆ: Իհարկե, վո՛չ: Նահանջի մասին այստեղ
կարող են խոսել միայն այն մարդիկ, վորոնք սխալների ու
ծոռամտերի շարունակումը հարձակում են համարում, իսկ
սխալների դեմ պայքարելը — նահանջ: Սխալներ ու ծոռամտեր
կիրառելու կարգով հարձակում, — ինչ ասել կուզի, լա՛վ
«հարձակում է»:

Մենք առաջադրեցինք դյուրամտեսական արտելը վոր-
պես կոլտնտեսային շարժման հիմնական ձև տվյալ մոմեն-
տին, տալով համապատասխան որինակելի կանոնադրու-
թյուն, վորպես կոլտնտեսային շինարարութեան վերաբերյալ
աշխատանքի ղեկավարութուն: Նահանջում ենք արդյոք
մենք այս դործից: Իհարկե, վո՛չ:

Մենք առաջադրեցինք՝ բանվոր դասակարգի ու չքավո-

րութեան արտադրական գործան ամբաստանը միջակի հետ
վորպես կոլտնտեսային շարժման հիմք տվյալ մոմենտին:
Նահանջում ենք արդյոք մենք այդ դործից: Իհարկե, վո՛չ:

Կուլակութեանը վորպես դասակարգ վերացնելու լո-
ղունդը մենք առաջադրեցինք վորպես դյուրում կատարվող
մեր գործնական աշխատանքի դիտարկող տվյալ մո-
մենտին: Նահանջում ենք արդյոք մենք այդ դործից: Իհար-
կե, վո՛չ:

Մենք դեռևս 1930 թվի հունվարին վերցրինք ԽՍՀՄ-ի
դյուրամտեսութեան կուլեկտիվացման վորոշ տեմալ՝
ԽՍՀՄ-ի մարդերը բաժանելով վորոշ խմբերի ու յուրաքան-
չյուր խմբի համար իր հատուկ տեմպը վորոշելով: Նահան-
ջում ենք արդյոք մենք այդ դործից: Իհարկե, վո՛չ:

Ել վո՞րտեղ է այստեղ կուսակցութեան «նահանջը»:

Մենք ուզում ենք, վոր սխալներ ու ծոռամտեր թույլ
տված մարդիկ նահանջեն իրենց սխալներից: Մենք ուզում
ենք, վոր քյալլադյոցներն իրենց քյալլադյոցութեանից նա-
հանջեն դեպի լենինիզմի դիրքերը: Մենք այդ ուզում ենք,
վորովհետև միայն այդ պայմանով կարելի կլինի շարունա-
կել իսկական հարձակումը մեր դասակարգային թշնամիներ-
ի դեմ: Նշանակում է այս արդյոք, վոր սրանով մենք
ընթացք ենք կատարում դեպի հետ: Իհարկե, վո՛չ: Մա մի-
այն այն է նշանակում, վոր մենք ուզում ենք կանոնավոր
հարձակում դործել և վոչ թե հարձակման քյալլադյոցական
խաղ անել:

Մի՞թե պարզ չէ, վոր միայն տարրինակ մարդիկ ու
«ձախ» խոտորիչները կարող են կուսակցութեան այսպիսի
դիրքավորումը վորպես նահանջ դնահատել:

Նահանջի մասին շարակրատող մարդիկ չեն հասկանում
առնվազն յերկու բան:

1) Նրանք հարձակման որենքները չբխտեն: Նրանք չեն
հասկանում, վոր առանց նվաճած դիրքերի ամբաստան՝
հարձակումը մի հարձակում է, վոր դասապարտված է տա-
պալման: Յե՞րբ կարող է հարձակումը հաջող լինել, ասենք,
ոպդական դործի բնագավառում: Յերբ մարդիկ չեն սահ-
մանափակվում հախուճն առաջխաղացումով, այլ ջանում են
դրա հետ միասին ամբաստան գրաված դիրքերը, վերախմբա-

¹ Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

վարել իրենց ուժերը մոտավաճ իրադրութեանը համապատասխան, անբացձեռն թիկունքները, մոտ բերել սեղերվները: Այս բոլորն ինչի՞ համար և հարկավոր: Նրա՞ համար, վոր մեզ ապահովենք անակնկալներից, վերացնենք առանձին ճեղքվածքները, վորոնցից ապահովված չե՞ վոչ մի հարձակում, և այդպիսով նախապատրաստենք թշնամու լիակատար լիկվիդացիան: Լեհական զորքերի սխալը 1920 թվին, յեթե վերջնենք զործի միայն ռազմական կողմը, այն և, վոր նրանք արհամարհեցին այս կանոնը: Սրանով և, ի միջի այլոց, բացատրվում, վոր հախուռն կերպով մինչև Կիևի սլանալով՝ նրանք ստիպված էին հետո նույնպես հախուռն կերպով հետ սլանալ մինչև Վարչավա: Խորհրդային զորքերի սխալը 1920 թվին, յեթե վերջնենք դարձյալ զործի միայն ռազմական կողմը, այն և, վոր նրանք Վարչավայի վրա իրենց զործած հարձակման ժամանակ կրկնեցին լեհերի սխալը:

Նույնը հարկավոր և ասել դասակարգային կովի ճակատում հարձակվելու որենքների մասին: Չի կարելի հաջող հարձակում զործել դասակարգային թշնամիներին լիկվիդացիայի յենթարկելու նպատակով՝ առանց անբացձեռն նվաճած դիրքերը, առանց վերախմբավորելու իր ուժերը, առանց ռեզերվներով ապահովելու ճակատը, առանց ամրացնելու քիմուսները և այլն:

Ամբողջ բանն այն և, վոր քյալպոլոդները չեն հասկանում հարձակման որենքները: Ամբողջ բանն այն և, վոր կուսակցութեանը դրանք հասկանում և ու կիրանում և կյանքում:

2) Նրանք չեն հասկանում հարձակման դասակարգային բնույթը: Իզավում են հարձակման մասին: Բայց հարձակում վո՞ր դասակարգի վրա, վո՞ր դասակարգի հետ դաշնակցած: Մենք հարձակում ենք զործում գյուղի կապիտալիստական տարրերի վրա՝ միջակի հետ դաշնակցած, վորովհետև միայն այդպիսի հարձակումը կարող և մեզ հաղթութեան տալ: Բայց ի՞նչպես վարվենք, յեթե կուսակցութեան առանձին ջոկատների բուն վողեորութեան պահին հարձակումն սկսում և դուրս բնկնել ճիշտ ճանապարհից և իր սուր ծայրով շուռ և գալիս մեր դաշնակցի դեմ, միջակի

դեմ: Մի՞թե մեզ հարկավոր և ամեն մի հարձակում և վոչ թե հարձակում վորոչ դասակարգի վրա, վորոչ դասակարգի հետ դաշնակցած: Չե՞ վոր Դոն-Քիչոսը նույնպես յերեակայում ևր, թե ինքը հարձակում և թշնամիների վրա, յերբ դրոհի յեր դնում հողմադացի դեմ: Սակայն հայտնի յե, վոր այդ, թող թույլ տրվի ասել, հարձակումով նա իր ճակատը ջարդեց:

Յերևի Դոն-Քիչոսի դպինները քնել չեն թողնում մեր «ձախ» խտորիչներին:

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԸՍՐՑ: Վո՞րն և մեղանում գլխավոր վտանգը—ա՞յլը, թե «ձախը»:

ՊԱՏԱՍԽԱՆ: Գլխավոր վտանգը մեղանում աջն և: Մեղանում աջ վտանգը յեղել և և մնում և գլխավոր վտանգը:

Այս դրույթը չի՞ հակասում արդյոք Կենտկոմի 1930 թ. մարտի 15-ի վորոշման մեջ յեղած հայտնի թեղիսին այն մասին, վոր «ձախ» խտորիչների սխալներն ու ծուռմներն այժմ կորսնտեսային շարժման գլխավոր արդեւալն են: Վո՞չ, չի հակասում: Բանն այն և, վոր «ձախ» խտորիչների սխալները կորսնտեսային շարժման բնագավառում այնպիսի սխալներ են, վորոնք նպաստավոր իրադրութեան են ասեղծում կուսակցութեան մեջ աջ թեղման ուժեղացման ու ամրացման համար: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր այդ սխալները կուսակցութեան դիժը սխալ լուսով են պատկերում,—ասել և թե՛ նրանք հեշտացնում են կուսակցութեան վարկարեկման դործը,—հետևաբար, նրանք հեշտացնում են աջ տարրերի պայքարը կուսակցութեան ղեկավարութեան դեմ: Կուսակցական ղեկավարութեան վարկարեկումը հենց այն տարրական հողն և, վորի բազայի վրա յե միայն, վոր կարող և անդի ունենալ աջ ուկլոնիստների պայքարը կուսակցութեան դեմ: Այս հողն աջ ուկլոնիստներին տալիս են «ձախ» խտորիչները, նրանց սխալներն ու ծուռմները: Այս պատճառով աջ ուկլոնիստների դեմ հաջողութեամբ կովելու համար հարկավոր և հաղթահարել «ձախ» ուկլոնիստներին սխալները: «Ձախ» խտորիչներն աջ ուկլոնիստների դաշնակիցներն են որքեկտիորեն:

Այս և «ձախ» ուկլոնիստների և աջ ուկլոնիստների միջև յեղած յուրորինակ



Այս կապով եւ հարկավոր ե բացատրել այն փաստը, վարձիքանի «ձախեր» հաճախակի խոսք են բաց անում անջրի հետ ըրով ունենալու մասին: Սրանով եւ հարկավոր ե բացատրել այն յուրորինակ յերևույթը, վոր «ձախիկները» մի մասը, վորը դեռևս յերեկ ուռա-հարձակում եր «կատարում» ե փորձում եր ընդամենը մի յերկու-յերեք շաբաթվա ընթացքում կոլեկտիվացնել ՍՍՀՄ-ն, այսոր պատիվության մեջ ե ընկնում, ձեռքերը կախ ե դցում ու սրայքարի դաշտը փառավորապես դիջում ե աջ ուղիւնիտներին՝ այդպիսով կուլակության հանդեպ իսկահրան (առանց չակերտների՝) նահանջի դիմ վարելով:

Ընթացիկ մոմենտի առանձնահատկությունն այն ե, վոր «ձախ» խոտորիչները սխալները դեմ մղած սրայքարը մեղանում հանդիսանում ե աջ ուղիւնիտի դեմ հաջող պայքար մղելու պայմանն ու յուրորինակ ձևը:

ՎԵՅՅԵՐՈՐԳ. ՀԱՐՅ: Ի՞նչպես դնահատենք գյուղացիների մի մասի տեղատվությունը կոլտնտեսություններից:

ՊՍՏԱՍԽԱՆ: Գյուղացիների մի մասի տեղատվությունը նշանակում ե, վար վերջին ժամանակներս մեղանում ծնունդ են առել վորոշ քանակով վուչ-հաստատուն կոլտնտեսություններ, վորոնք այժմ մաքրվում են անկայուն տարրերից: Այդ նշանակում ե, վոր փքուն կոլտնտեսությունները կանհետանան, հաստատունները կմնան ու կամրանան: Յես կարծում եմ, վոր սա միանգամայն նորմալ յերևույթ ե: Միքանի ընկերներ սրանից հուսահատության մեջ են ընկնում, խուճապի յեն մատնվում ու ջղաձգորեն կառչում են ուռցրած տոկոսներին: Մյուսները շարախնդում են ու կոլտնտեսային շարժման «տապալում» են գուշակում: Թե՛ նրանք, թե՛ սրանք շարաչար սխալվում են: Թե՛ նրանք, թե՛ սրանք հեռու յեն կոլտնտեսային շարժման ելությունը մարքսիստներն ըմբռնելուց:

Կոլտնտեսություններից հեռանում են, ամենից առաջ, այսպես կոչված՝ մեռյալ հողիները: Այդ նույնիսկ վո՛չ թե հեռանալ ե, այլ դատարկությունը յերևան հանել: Արդյոք մեզ հարկավոր են մեռյալ հողիները: Իհարկե, հարկավոր չեն: Յես կարծում եմ, վոր հյուսիսային-կովկասցիները ե ուղիւնիտացիները միանգամայն ձիշտ են վարվում, յերբ

նրանք ցրում են մեռյալ հողիներ ունեցող կոլտնտեսությունները ե կազմակերպում են իրոք կենդանի ու իրոք կայուն կոլտնտեսություններ: Սրանից կոլտնտեսային շարժումը միայն շահում ե:

Յերկրորդ, հեռանում են անհարազատ, մեր գործին ուղղակի թշնամի տարրերը: Պարզ ե, վոր այդպիսի տարրերն ինչքան ավելի շուտ դուրս վանդվեն, այնքան ավելի լավ կոլտնտեսային շարժման համար:

Վերջապես, հեռանում են տատանվող տարրերը, վորոնց վո՛չ անհարազատ կարելի յե անվանել, վո՛չ ել մեռյալ հողիներ: Այդ հենց այն գյուղացիներն են, վորոնց այսոր մենք դեռ չենք կարողացել համոզել, վար մեր գործն արդարացի յե, բայց վորոնց մենք անպատճառ կհամոզենք վաղը: Այդպիսի գյուղացիների հեռանալը լուրջ, թեև ժամանակավոր, կորուստ ե կոլտնտեսային շարժման համար: Այդ պատճառով կոլտնտեսությունները տատանվող տարրերի համար մղվող պայքարն այժմ կոլտնտեսային շարժման ամենակենսական խնդիրներից մեկն ե:

Դուրս ե դալիս, վոր գյուղացիները միայն բացասական տվությունը կոլտնտեսություններից՝ միայն բացասական յերևույթ չե: Դուրս ե դալիս, վոր, ինչ չափով այդ տեղատվությունն ազատում ե կոլտնտեսությունները մեռյալ հողիներից ե ուղղակի անհարազատ տարրերից, դա նշանակում ե կոլտնտեսությունների առողջացման ու ամրացման բարեբար պրոցես:

Մի ամիս սրանից առաջ գտնում եյին, վոր հատիկային մարդերում մենք ունենք 60%-ից ավելի կոլեկտիվացում: Այժմ պարզ ե, վոր յեթե նկատի ունենանք իսկական ու իրոքիչատե կայուն կոլտնտեսությունները, ապա այդ թիվն ակներևաբար չափազանցված եր: Յեթե կոլտնտեսային շարժումը գյուղացիների մի մասի տեղատվությունից հետո ամբանա ու մնա հատիկային մարդերի կոլեկտիվացման 40% թվի վրա, — իսկ այդ հաստատապես իրագործելի յե, — ապա այդ կլինի կոլտնտեսային շարժման մեծագույն նվաճումը տվյալ մոմենտին: Յես միջին թիվ եմ վերցնում հատիկային մարդերի համար, լավ իմանալով, վոր մեղանում ընդամեն կան համատարած կոլեկտիվացման առանձին շրբ-

ջաններ 80—90% թվանշանով: Կոլեկտիվացման 40% հատիկային մարզերում—տա նշանակում է, վոր կոլեկտիվացման հնգամյա պլանը մենք կարողացանք կրկնակի չափով իրագործել 1930 թ. դարնան մոտերքը:

Ո՞վ վճռահանութուն կունենա ժխտելու ԽՍՀՄ-ի սոցիալիստական զարգացման գործում յեղած այս պատմական նվաճման վնասակար քնույթը:

ՅՈՒՆԵՍԿՈՒԴ, ՀԱՐՑ: Արդյոք լա՞վ են վարվում տատանվող գյուղացիները՝ կոլտնտեսութուններից հեռանալով:

ՊԱՍՍՍԵՆ: Վ՛նչ, նրանք լավ չեն վարվում: Կոլտնտեսութուններից հեռանալով՝ նրանք հենց իրենց սեփական շահերին են դեմ դնում, վորովհետև միայն կոլտնտեսութուններն են գյուղացիներին կարիքից ու խափարից դուրս գալու յեղք տալիս: Կոլտնտեսութուններից հեռանալով՝ նրանք իրենց դնում են վատթարագույն դրության մեջ, վորովհետև իրենց զրկում են՝ այն արտոնութուններից ու ոգուաններից, վոր Խորհրդային իշխանութունն ընձեռնում է կոտնտեսութուններին: Կոլտնտեսութուններում յեղած սխալներն ու ծոռաները դուրս գալու փաստարկ չեն: Սխալները հարկավոր է ուղղել ընդհանուր ուժերով՝ մնայով կոլտնտեսության մեջ: Իրանք ամելի էս հեշտ է ուղղել այն պատճառով, վոր Խորհրդային իշխանութունը բոլոր ուժերով կռվելու յե գրանց դեմ:

Լենինն ասում է, վոր

«Մանր անտեսության սխտեմը ապրանքային արտադրության պայմաններում ի վիճակի չե փրկելու մարդկութունը մասսաների թվաուսթյունից ու մասսաներին կեղեքելուց» (Վ. XX, էջ 122):

Լենինն ասում է, վոր

«Մանր անտեսությամբ մարդ կարեքից դուրս չի կարող գալ» (Վ. XXIV, էջ 540):

Լենինն ասում է, վոր

«Յեթե մենք առաջվա նման նստեք մանր անտեսություններում, թեկուզ է վորդես աղաս քաղաքացիներ աղաս հողի վրա, մեզ, միևնույն է, անխուսափելի կորուստ է սպանում» (Վ. XX, էջ 417):

Լենինն ասում է, վոր

«Միայն ընդհանուր, արտելային, ընկերային աշխատանքի ոգուսթյամբ կարելի յե դուրս գալ այն փակուղուց, ուր բշե է մեզ իմուրելուխտական պատերազմը» (Վ. XXIV, էջ 537):

Լենինն ասում է, վոր

«Անհրաժեշտ է անցնել ընդհանուր մշակման խոշոր որինակի տըստեսութուններում», վորովհետև «տանց դրան չի կարելի դուրս գալ այն փլուզումից, այն ուղղակի հուսահատական գրությունից, վորի մեջ գտնվում է Ռուսաստանը» (Վ. XX, էջ 418):

Ի՞նչ է նշանակում այս ամենը:

Այս նշանակում է, վոր կոլտնտեսութունները միակ միջոցն են, վորը գյուղացիներին կարիքից ու խափարից դուրս գալու յեղք է տալիս:

Պարզ է, վոր գյուղացիները ճիշտ չեն վարվում՝ կոլտնտեսութուններից դուրս գալով:

Լենինն ասում է, վոր

«Իոք, իհարկե, բոլորը էլ գիտեք Խորհրդային իշխանության ամբողջ գործունեյութունից, թե մենք ինչպիսի հսկայական նշանակություն ենք ապլիս կոմունաներին, արտելներին և առհասարակ ամեն անակի կաղմակերպություններին, վորոնց նպատակն է մանր, միանձնյա գյուղացիական տնտեսութունը հանրայինի, ընկերայինի կամ արտելայինի փոխարկել, աստիճանարաթ աջակցել այդ փոխարկմանը» (Վ. XXIV, էջ 579):

Լենինն ասում է, վոր

«Խորհրդային իշխանութունը կոմունաներին ու ընկերություններին ուղղակի առաջիկուրյուն է տվել՝ առաջին տեղը դնելով նրանց» (Վ. XXIII, էջ 399):

Ի՞նչ է նշանակում այս:

Այս նշանակում է, վոր Խորհրդային իշխանութունը կոլտնտեսութուններին արտոնութուններ ու առաջիկություններ է տալու՝ միանձնյա տնտեսությունների հանդեպ: Այս նշանակում է, վոր նա կոլտնտեսութուններին արտեսութուններ է տալու թե՛ հող հատկացնելու իմաստով, թե՛

1 Ընդդժմուն իմն է: Ի. Ստ.:

մեքենաներ, տրակտորներ, սերմացու հատիկ մատակարարելու իմաստով և այլն, թե՛ հարիման թեթևացման իմաստով, թե՛ վարիկեր տրամադրելու իմաստով:

Խորհրդային իշխանութիւնն ինչո՞ւ չէ արտոնութիւններ ու առավելութիւններ տալիս կոլտնտեսութիւններին:

Այն պատճառով, վոր կոլտնտեսութիւնները դուրսացին թշվառութեանից ազատելու միակ միջոցն են:

Այն պատճառով, վոր կոլտնտեսութիւններին արած առավելական ողնութիւնը չքալորութեանն ու միջակներին ողնելու ամենից իրական ձևն է:

Որքո՞ւ Խորհրդային իշխանութիւնը վորոշեց հարկումից յերկու տարով ազատել կոլտնտեսութիւնների հանրայնացված բոլոր բանող անասուններին (ձիերին, յեղներին և այլն), ինչպես կոլտնտեսութիւնների կոլեկտիվ տիրապետութեան տակ դանվող, այնպես եւ կոլտնտեսականների անհատական տիրապետութեան տակ դանվող բոլոր կովերին, խոզերին, վոլջտարներին ու թռչուններին:

Բացի դրանից, Խորհրդային իշխանութիւնը վճռել է մինչև տարվա վերջը ետաձգել կոլտնտեսականներին տրված վարիկերի սրարտքի մարումը և վերացնել կոլտնտեսութիւնները մտած դուրսացիների վրա մինչև ապրիլի 1-ը դրված բոլոր աուզանքներն ու դասական տուժանքները:

Վերջապես, նա վճռել է անպատճառ իրականացնել կոլտնտեսականներին ներկա տարում 500 միլիոն ուրբ. չափով վարիկավորելը:

Այս արտոնութիւնները կողմնէն դուրսացի-կոլտնտեսականներին: Այս արտոնութիւնները կողմնէն այն կոլտնտեսական դուրսացիներին, վորոնք կարողացել են անըզվիւրի մնալ տեղատուութեան հանդեպ, վորոնք կոլեկիւ են կոլտնտեսութիւնների թշնամիների դեմ մղած սրայբարում, վորոնք սրաչապանել են կոլտնտեսութիւնները և իրենց ձեռքումն են պահել կոլտնտեսային շարժման մեծ դրոշը: Այդ արտոնութիւնները կողմնէն այն չքալոր ու միջակ կոլտնտեսականներին, վորոնք այժմ մեր կոլտնտեսութիւնների հիմնական կորիզն են կազմում, վորոնք կամրացնեն ու կձևավորեն մեր կոլտնտեսութիւնները և վորոնք սոցիալիզմի կողմը կնվանեն միլիոնավոր ու միլիոնավոր դուրսացիներին:

Այս արտոնութիւնները կողմնէն այն դուրսացի-կոլտնտեսականներին, վորոնք այժմ կոլտնտեսութիւնների հիմնական կազմակերպիչն են կազմում և վորոնք միանդամ այն տրեմանի յեն, վորոնք իրենց կոլտնտեսային շարժման հերոսներ անվանենք:

Այդ արտոնութիւնները չեն տալիս կոլտնտեսութիւններից հեռացած դուրսացիները:

Մի՞թե պարզ չէ, վոր դուրսացիները սխալ են դործում, յերբ հեռանում են կոլտնտեսութիւններից:

Մի՞թե պարզ չէ, վոր նրանք կոլտնտեսութիւնները վերադառնալով միայն կարող են ապահովել իրենց համար այդ արտոնութիւններն ստանալը:

ՌԻՇԵՐՈՐԳ ԼԱՐՅ: Ի՞նչպես վարվենք կոմունաների հետ, հարկավոր չէ՞ արդյոք ցրել նրանց:

ՊԱՏԱՍՍԱՆ: Վո՞չ, հարկավոր չէ ու կարիք չկա ցրելու նրանց: Յետ խոսում եմ իրական, և վոչ թե թղթե կոմունաների մասին: ԽՍՀՄ-ի հատիկային մարդերում գոյութիւն ունեն մի շարք հոյակապ կոմունաներ, վորոնք արժանի յեն, վորպեսզի նրանց խրախուսենք ու աջակցենք: Յետևատի ունեմ Հին կոմունաները, վորոնք դիմացել են տարիների փորձութիւններին ու կոլեկիւ են պայքարում, շիտովին արդարացնելով իրենց դոյութիւնը: Ինչ վերաբերում է նոր կոմունաներին, վորոնք մոտ ժամանակներս են միայն կազմվել, ապա նրանք իրենց դոյութիւնը կկարողանան պաշտպանել միայն այն դեպքում, յեթե նրանք կամավոր կերպով են կազմակերպվել, դուրսացիների ակտիվ աջակցութեամբ, առանց կենդանի հարկադրական հանրայնացման:

Կոմունաներ կազմելն ու վարելը բարդ ու դժվար գործ է: Խոշոր ու կայուն կոմունաները կարող են դոյութիւն ունենալ ու զարգանալ փորձառու կազմերի ու փորձված ղեկավարների առկայութեան դեպքում միայն: Արտելի կանոնադրութիւնից հապճեպ կերպով կոմունաների կանոնադրութեան փոխադրվելը կարող է միայն վանել դուրսացիներին կոլտնտեսային շարժումից: Այս պատճառով այդ գործին հարկավոր է վերաբերվել հատուկ լրջութեամբ և առանց վորելիցե շտապողականութեան: Արտելն ավելի հեջա

գործ և և ալկիլի յև մատչելի լաճն դյուզացիական մասսաների դիտակցութեանը: Այդ պատճառով արտելը տվյալ մոմենտին կոլտնտեսային շարժման ամենից տարածված ձևն է: Գյուղատնտեսական արտելների ամբողջամբ ու ամբողջամբ միայն կարող է հող ստեղծվել, վորպեսզի դյուզացիները մասսայաբար շարժվեն կոմունայի կողմը: Այս պատճառով կոմունան, վորը բարձրագույն ձևն է, կարող է կոլտնտեսային շարժման գլխավոր ողակ դառնալ միայն սպաղաչում:

ԻՆՏԵՐՈՐԳ ԼԱՐՑ: Ի՞նչպես վարվենք կուլակութեան հետ:

ՊՍՏԱՍԽԱՆ: Մինչև այժմ մեզանում խոսքը միջակի մասին էր: Միջակը բանվոր դասակարգի դաշնակիցն է, և մեր քաղաքականութեանը նրա նկատմամբ բարեկամական պետք է լինի: Ուրիշ բան է կուլակը: Կուլակը Սորճողային իշխանութեան թշնամին է: Մեր ու նրա միջև հաշտութեան չկա և չի ել կարող լինել: Մեր քաղաքականութեանը կուլակութեան նկատմամբ՝ նրան վորպես դասակարգ վերացնելու քաղաքականութեանն է: Այս, իհարկե, չի նշանակում, թե մենք նրան կարող ենք մեկենիխեկ վերացնել: Բայց այս նշանակում է, վոր մենք գործն այնպիսի ուղղութեամբ պետք է տանենք, վորպեսզի չըջապատենք կուլակութեանը ու լիկվիդացիայի յենթարկինք:

Մենք թե ինչ է ասում Լենինը կուլակի մասին.

«Կուլակները—ամենագոյնային, ամենակոպիտ, ամենալայնի շահաքննողներն են, վորոնք այլ յերկրների պատմութեան մեջ բանիցս վերականգնել են կալվածատերերի, թագավորների, տերտերների, կապիտալիստների իշխանութեանը: Կուլակները կալվածատերերից ու կապիտալիստներից շատ են: Բայց և այնպես կուլակները վորքամասնութեան են ժողովրդի մեջ... Այդ արյունարբունները հարստացել են ժողովրդի կարիքն ուղարկելով պրոպագանդի ժամանակ, նրանք հողարներով ու հարյուր հազարներով փող են կուտակել՝ հացի ու մյուս մթերքների գները բարձրացնելով: Այդ սարդերը ճարպակալել են պատերազմից քայքայված դյուզացիների հաշվին, քաղցած բանվորների հաշվին: Այդ սարդակներն աշխատավորների արյունն են խմել՝ այնքան ավելի հարստանալով, վորքան ավելի յեր սոված մտում բանվորը քաղաքներում ու ֆաբրիկաներում: Այդ վամպիրներն իրենց ձեռքն են հավաքել ու հավաքում են կալվածատիրական հողերը, նրանք նրից ու նրից սարկացնում են չբավոր դյուզացիներին» (Տ. XXIII, էջ 206—207):

Մենք հանդուրժում ելինք այդ արյունարբուններին, սարդերին ու վամպիրներին, նրանց շահաքննողական տենդենցների ասամանափակման քաղաքականութեան կիրառելով: Հանդուրժում ելինք, վորովհետև վորչեղով չելինք կարող փոխարինել կուլակային տնտեսութեանը, կուլակային արտադրութեանը: Այժմ մենք հարավորութեան ունենք հավելյալով փոխարինելու նրանց տնտեսութեանը մեր կոլտնտեսութեանների ու խորհանտեսութեանների տնտեսութեամբ: Այդ սարդերին ու արյունարբուններին այլևս հանդուրժելու կարիք չկա: Այսուհետև ել հանդուրժել այդ սարդերին ու արյունարբուններին, վորոնք հրկիզում են կոլտնտեսութեանները, սպանում են կոլտնտեսային գործիչներին ու փորձում են վիժեցնել ցանքը—նշանակում է բանվորների ու դյուզացիների շահերի դեմ գնալ:

Ուստի կուլակութեանը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականութեանը պետք է կիրառվի այն ամբողջ հաստատականութեամբ ու հետևողականութեամբ, վորին միայն բողջեթիկներն են ընդունակ:

ՏԱՍՆԵՐՈՐԳ ԼԱՐՑ: Վո՞րն է կոլտնտեսութեանների մերձավորագույն գործնական խնդիրը:

ՊՍՏԱՍԽԱՆ: Կոլտնտեսութեանների մերձավորագույն գործնական խնդիրն է՝ պայքարել ցանքի համար, պայքարել ցանքի տարածութեաններն ամենամեծ չափով ընդարձակելու համար, պայքարել ցանքը ձիշտ կազմակերպելու համար:

Ցանքի խնդիրն այժմ պետք է հարմարեցվեն կոլտնտեսութեանների մյուս բոլոր խնդիրները:

Ցանքի կազմակերպման աշխատանքին այժմ կոլտնտեսութեաններում պետք է յենթարկվեն մյուս բոլոր աշխատանքները:

Այս նշանակում է, վոր կոլտնտեսութեանների ու նրանց անհուսակցական ակտիվի կայունութեանը, կոլտնտեսութեանների ղեկավարների ու նրանց բողջեթիկյան կորիզի ընդունակութեանն ստուգվելու յին վո՛չ թե ճաճոսն բանաձևերով ու մեծախոստում վորջույններով, այլ ցանքի ձիշտ կազմակերպման կենդանի գործով:

Բայց գործնական այս խնդիրը պատվով իրադրվելու

համար հարկավոր և կոլտնտեսային աշխատողների ուշադրութեամբ դարձնել կոլտնտեսային շինարարութեան տնտեսավարական հարցերի կողմը, ներկայումսային շինարարութեան հարցերի կողմը:

Մինչև վերջին ժամանակներս կոլտնտեսային աշխատողները ուշադրութեան կենտրոնում գտնվում էր կոլեկտիվացման բարձր թվերի հետևից ընկնելը, ընդվորում մարդիկ չեյին ուզում տեսնել իրական կոլեկտիվացման և թղթե կոլեկտիվացման միջև յեղած տարբերութեանը: Այժմ թվերով այդպես տարվելը պետք է դեն նետվի: Այժմ աշխատողների ուշադրութեանը պետք է կենտրոնանա կոլտնտեսութեանների ամբողջական վրա, կոլտնտեսութեանների կազմակերպական ձևավորման վրա, կոլտնտեսութեաններում գործարար աշխատանք կազմակերպելու վրա:

Մինչև վերջին ժամանակներս կոլտնտեսային աշխատողների ուշադրութեանը կենտրոնացած էր կոլտնտեսային խոշոր միավորներ կազմակերպելու վրա, այսպես կոչված՝ «գլխամասները» կազմակերպման վրա, ընդվորում՝ «գլխամասները» հաճախ այսպես ասում, դառնում էին ծանրաշարժ թղթե պարետութեաններ, վորոնք չենք ուզում ուղղորդելում զուրկ էին տնտեսական արժանիքից: Հետևաբար ցուցական աշխատանքը կլանում էր գործնական աշխատանքին: Այժմ այդ ցուցական կողմով տարվելը պետք է դեն նետվի: Այժմ աշխատողների ուշադրութեանը պետք է սրվի կոլտնտեսութեանների կազմակերպական-տնտեսական աշխատանքի վրա շեղվելում ու դյուրեղում: Յերբ այդ աշխատանքը պատշաճ հաջողութեաններ ցույց կտա, «գլխամասներն» իրենց իրենց յերևան կդան:

Մինչև վերջին ժամանակներս միջակներին կոլտնտեսութեաններում ղեկավար աշխատանքի մասնակից անելու վրա քիչ ուշադրութեան էր դարձվում: Մինչդեռ միջակների մեջ կան յերեկի տնտեսատերեր, վորոնք կարող կլինեն կոլտնտեսային շինարարութեան հոյակապ տնտեսավարական աշխատողներ դառնալ: Այժմ մեր աշխատանքի այդ բացը պետք է վերացվի: Այժմ խնդիրն այն է, վոր կոլտնտեսութեանների ղեկավար աշխատանքի ներդրավենք միջակների միջից լավագույն մարդկանց և նրանց հնարավորութեան

տանք ծավալելու այս գործում իրենց ընդունակութեանները:

Մինչև վերջին ժամանակներս բախտանաչափ ուշադրութեան չեյին դարձնում ղեղձկուհիների շրջանում կատարվող աշխատանքի վրա: Մեցած ժամանակաշրջանը ցույց տվեց, վոր ղեղձկուհիների շրջանում կատարվող աշխատանքը մեր աշխատանքի ամենից թույլ տեղն է: Այժմ այդ բացը պետք է վերացվի վճարար ու անդառնալիորեն:

Մինչև վերջին ժամանակներս մի շարք շրջաններ կոմունիստներ յեկնում էին այն բանից, թե իրենց իրենց սեփական ուժերով կարող են լուծել կոլտնտեսային շինարարութեան բոլոր խնդիրները: Իրանից յեկնելով՝ նրանք բավականաչափ ուշադրութեան չեյին դարձնում անկուսակցականներին կոլտնտեսութեաններում պատասխանատու աշխատանքի ներդրավելու վրա, անկուսակցականներին կոլտնտեսութեաններում ղեկավար աշխատանքի առաջ քաշելու վրա, կոլտնտեսութեաններում անկուսակցական լայն կախով կազմակերպելու վրա: Մեր կուսակցութեան պատմութեանն սուրացուցել է, իսկ կոլտնտեսային շինարարութեան անցած ժամանակաշրջանն էլ մի ավելորդ անդամ ցույց տվեց, վոր այդպիսի դերբավորումն արժատապես սխալ է: Յեթե կոմունիստները պարտակվելին իրենց կեղեի մեջ, պարսպով սահմանադրավելով անկուսակցականներից, նրանք ամբողջ գործը կկործանեյին: Յեթե կոմունիստներին հաջողվում էր փառավոր անուն վաստակել սոցիալիզմի համար մղած մարտերում, իսկ կոմունիզմի թշնամիները ջախջախված էյին դուրս գալիս, ապա այդ լինում էր, ի միջի այլոց, այն պատճառով, վոր կոմունիստները կարողանում էյին գործի ներդրավել անկուսակցականներին լավագույն մարդկանց, նրանք կարողանում էյին ուժեր քաղել անկուսակցականների լայն խավերի միջից, նրանք կարողանում էյին իրենց կուսակցութեանը շրջապատել անկուսակցական լայն կախով: Այժմ այս բացը անկուսակցականների նկատմամբ կատարվող մեր աշխատանքի մեջ պետք է վերացվի վճարար ու անդառնալիորեն:

Քեզդիմեր աշխատանքի այս բացերը, արժատապես վե-
րացնել դրանք, հենց այս և, վոր նշանակում և ունեւորի վրա
դնել կուտնտեսութիւններէ տնտեսավարական աշխատանքը:

Այսպէս ուրեմն՝

1) Յանքը ճիշտ կազմակերպել—այս և խնդիրը:

2) Ուշադրութիւնը կենտրոնացնել կուտնտեսային
չարժման տնտեսական հարցերի վրա,—այս և այն միջոցը,
վորն անհրաժեշտ և այդ խնդիրը լուծելու համար:

«Правда» № 92.

3 ապրիլի 1930 թ.

Հալիբեն թարգմանութիւն խմբ. Բ. Մարտիրոսյան

Տնի. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Վ. Զիլիսյան

Կոնսրսլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիտի լիազոր № 4—2520, հրատ. № 720,

Պատվեր № 163, տիրած 5.000, թղթի չափսը 84×110¹/₃₂

(32.550 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 1 տպ. մամուլ, ¹/₂ թերթ թուղթ

Հանձնվել և արտադրութիւն 16/VIII 1939 թ.

Ստորագրվել և տպագրելու 3/IX 1939 թ.

Գինը 30 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականութիւն հրատարակչութիւն տպարան
Յերեան, Ալլանովերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL1051314

16 СЕН 1939

466

41764 30 4.

-30-

11
36319

И. СТАЛИН

**ОТВЕТ ТОВАРИЩАМ
КОЛХОЗНИКАМ**

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939